[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
15	Հոկտեմբեր	2019 թ.		Ա	5026835541
[4] Մատակարարման ամսաթիվ					
15	Հոկտեմբեր	2019 թ.		Ճշգրտվող հաշվի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ		[6] Համար		

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր — Համար
	Լիազորագիր — Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	49104118 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354

անունը, ազգանունը

15/10/2019 14:33:07

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հերմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

«07» փետրվարի 2019թ. ք. Հրազդան

ՀՀ ՔԿ Կոտայքի մարզային քննչական վարչության քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Արամ Ռուբենի Սարգսյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 49104118 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ. դեկտեմբերի 11-ին՝ ժամը 23:00-ին ,,Հրազդան ԲԿ,, ՓԲԸ-ից ոստիկանության Հրազդանի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի 43 տան բնակիչ Կարեն Արմենի Մարգարյանը իրենց տան տանիքում կախվել է: Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը հայտնաբերել է Կ.Մարգարյանի դիակը՝ հիշյալ հասցեում գտնվող տան տանիքի հենապունից պարանով կախված վիճակում:

12.12.2018թ-ին ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով Կոտայքի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 49104118 քրեական գործը, որը նույն օրը ընդունվել է վարույթ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել և հիմնավորվել է, որ Կարեն Մարգարյանը իր ծնողների՝ Արմեն մարգարյանի և Ալվարդ Հարությունյանի հետ միասին բնակվել է Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի 43 տանը: 2018թ-ի հուլիս ամսից հերթափոխով Ծաղկաձոր քաղաքում գտնվող մի ամառանոցում պահակություն է կատարել: Նա ամեն երրորդ օրը գնացել է աշխատանքի ժամը 09:30-ի սահմաններում ու վերադառնել՝ հաջորդ օրը ժամը 09:30-ին: 2018թ-ի դեկտեմբերի 10-ին, երեկոյան,ծնողների հետ գտնվելիս է եղել տանը, երբ հորը ասել է, որ ,,Տոյոտա Պռադո,, մակնիշի մեքենա է պատվիրել, որը հասել է Վրաստանի Փոթի քաղաք և շարժիչի բլոկը ճաքել է ու 3000 դոլար գումար է պետք այն վերանորոգելու համար: Հայրը բարկացել է՝ ասելով, որ տանը հացի գումար անգամ չկա և ինքը չի կարող նման գումար ճարել: Դեռևս 2016թ-ից, երբ Կարեն Մարգարյանի հայրը՝ Արմեն Մարգարյանը ՌԴ-ում աշխատելիս է եղել, Կարենը նրան ասել է, որ արտասահմանից մեքենա է պատվիրել, նրանից գրեթե ամեն ամիս գումար է խնդրել և հայրը տարբեր չափերով՝ ընդհանուր մոտ 16.000 ԱՄՆ դոլարի չափով գումար է ուղարկել Կարենի անունով և Հայաստան վերադառնալիս, ամեն անգամ երբ հարցրել է, թե մեքենան ինչ է եղել, Կարենը պատասխանել է, որ ճանապարհին է և գալիս է: Բացի այդ Կարեն Մարգարյանը հաճախակի հորից գումար է խնդրել իբրև Մարի անունով ընկերուհու հիվանդանոցի բուժման համար, նրա հետ հանդիպումների համար: Կարեն Մարգարյանի մահվանից հետո պարզվել է, որ վերջինս ոչ մի մեքենա չի պատվիրել, ինչպես նաև ոչ մի ընկերուհի

չունի: Բացի այդ պարզվել է, որ Կարեն Մարգարյանը առցանց խաղադրույքներ է կատարել և գումարային պարտքեր է ունեցել ընկերներին և ծանոթներին, որոնց մեծ մասին խոստացել էր պարտքերը վերադարձներ 11.12.2018թ-ին:

Վերոգրյալը հիմնավորվել է Արմեն Մարգարյանի, Մարգպետ Մարգարյանի, Սուրեն Գալստյանի, Սևակ Հարությունյանի, Արայիկ Մանուկյանի, Աշոտ Հովհաննիսյանի, Էմին Սիմոնյանի, Ալվարդ Հարությունյանի, Հովհաննես Օսյանի, Տիգրան Սահակյանի, Վարդան Ալեքսանյանի, Սեյրան Հայրապետյանի, Վիգեն Արամյանի, Կամո Հայրապետյանի, Անդրանիկ Մանուկյանի, Ալբերտ Ավետիսյանի, Էդգար Ալոյանի, Դավիթ Մկրտչյանի, Նարինե Օհանյանի, Գրիգոր Շահբազյանի, Կարեն Հայրապետյանի, Գուրգեն Մարգարյանի, Գոռ Առաքելյանի, Արմեն Անտիկյանի, Արթուր Սարգսյանի, Վահագ Չիլինգարյանի, Ավետիք Մանուկյանի, Վարդիշաղ Միքայելյանի, Գայանե Գրիգորյանի, Կարեն Ալեքսանյանի, Արտյոմ Կարապետյանի, Նաիրա Հարությունյանի, Սեդա Հարությունյանի, Արմեն Սարգսյանի, Վազգեն Մարգարյանի, Արմեն Խոջաբեկյանի ցուցմունքներով:

Դեպքի վայրի զննմամբ, տանիքի հատակին, դիակից 110 սմ հեռավորության վրա ,,Լենովո,, տեսակի բջջային հեռախոսի տակ դրված վիճակում հայտնաբերվել է վանդակավոր թղթի կտորի վրա գրված ձեռագիր գրություն, որը պարունակում է հետևյալ գրառումը. ,, պապ ջան ինձ կներես մամային լավ կնայես մամային չմեխադրես հերս մաման ինչքան ուզեցելա խարնվի որ ստեխ չե իր չեի տրողում Մերիինել կպոխանցեք կասեք քեզ շատեմ սիրում պապ մի հատ խնդանք ունեմ չտրողես հեռձեն ինձ: Վոչմեկ մեխկ չունեն ես սխալ չանապար ընտրեցի ոնց կուզեի գրկեի ձեզ սիրումեմ ձեզ սաղ իմ սարքացնա եղել հերվ ոչմեկ մեղք չունեն Մնաք բարով ցավտ տանեմ սիրում եմ սաղիտ մի օր կհանդիպենք պաչումեմ սաղիտ,, :

<< Կոտայքի մարզի <<Հրազդան բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերությունից ստացված գրության համաձայն՝ Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի 43 տան բնակիչ, 09.08.1987թ-ին ծնված Կարեն Արմենի Մարգարյանը, <<Հրազդան բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերության հոգեբուժական և նարկոլոգիական կաբինետներում հաշվառման մեջ չի գտնվել:

<< ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնից ստացված գրության համաձայն՝ կատարվել են օպերատիվ հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում պարզվել է, որ Կարեն Մարգարյանը ինքնասպանություն է գործել: Պարզվել է, որ Կարեն Մարգարյանը թշնամիներ չի ունեցել, նրա հասցեին որևէ մեկի կողմից սպառնալիքներ չեն եղել և նախկինում վերջինիս կողմից ինքնասպանություն գործելու փորձեր չեն եղել: Պարզվել է, որ նա որևէ կրոնական կազմակերպության անդամ չի հանդիսացել:

Նկատի ունենալով, որ Կարեն Մարգարյանի ինքնասպանության հնարավոր պատճառը, նրա հոգեկան վիճակը և քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքների պարզումը հնարավոր է միայն դատահոգեբանական

բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ, 244-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 49104118 քրեական գործով նշանակել հերմահու դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանին:

2. Փորձագետի լուծմանը առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Ինչ հոգեվիճակում է գտնվել Կարեն Մարգարյանը ինքնասպանության նախորդող ժամանակահատվածում:

բ/ Կարեն Մարգարյանի նկատմամբ կատարված, հոր՝ Արմեն Մարգարյանի և շրջապատի վերաբերմունքը կարող էին հանցել այնպիսի հոգեվիճակի, որ վերջինիս կողմից կտուրում կախվելու միջոցով ինքնասպան լինելուն՝ պատճառահետևանքային կապ կա, թե ոչ:

գ/ Կարեն Մարգարյանի սոցիալական ծանր վիճակը կարող էր վերջինիս հանցել ինքնասպանություն կատարելու հոգեվիճակի, պատճառահետևանքային կապ կա, թե ոչ:

դ/ Եթե վերը նշված հանգամանքների պատճառով չէ Կարեն Մարգարյանը ինքնասպանություն կատարել, ապա գործի փաստական տվյալները հաշվի առնելով ինչը կարող էր նրա ինքնասպանության պատճառ հանդիսանալ:

3. Փորձագետին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբանության բնագավառի փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար:

4. Փորձագետին տրամադրել քրեական գործը:

5. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Կոտայքի մարզային քննչական
վարչության ավագ քննիչ՝ Ա. Սարգսյան